*Հավելված N3*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 25-ի N 250-Ա հրամանի*

*<u>Օրինակելի ձև</u>*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնանշման հարցման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 25-ի թիվ 03 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն
Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՎՁՄ ՇՄԴՊ ԳՀԾՁԲ 18/ 4

Պատվիրատուն՝ Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ը, որը գտնվում է Եղեգիս համայնք, Շատին վարչական տարածք փողոց 2 շինություն 17 հասցեում,հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել ավտոբուսային (միկրոավտոբուսային) փոխադրումների ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Գնանշման հարցմանը մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող որակավորման չափանիշներն ու այդ չափանիշների գնահատման համար ներկայացվելիք փաստաթղթերը սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրը ժամը $11^{00}$-ը: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է թղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար այդպիսի պահանջ ստանալուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Եղեգիս համայնք, Շատին վարչական տարածք փողոց 2 շինություն 17 հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը $11^{00}$--ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

**Սույն ընթացակարգը կազմակերպվում է հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջները:**

Հայտերի բացումը տեղի կունենա Եղեգիս համայնք Շատին վարչական տարածք փողոց 2 շինություն 17 հասցեում հրապարակման օրվանից հաշված 7-րդ օրվա ժամը $11^{00}$--ը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները պետք է ներկայացնել Գնումների բողոքարկման խորհուրդ՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1 հասցեով: Բողոքարկումն իրականացվում է սույն գնանշման հրավերով սահմանված կարգով: Բողոքը ներկայացնելու համար պահանջվում է վճար՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամի չափով, որը պետք է փոխանցվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության անվամբ բացված «900008000482» գանձապետական հաշվեհամարին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Սմբատյանին:

Հեռախոս 077 432 888

Էլ. փոստ <u>shatin@schools.am</u>, smbatyan.ani@mail.ru

Պատվիրատու <u>Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ</u>